ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 28

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30.05.2014
Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

Օրակարգ

1. Գարնանային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների և անցկացման մասին հաշվետվություն: /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:
2. Երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում: /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին կետի վերաբերյալ զեկուցողը նշեց, որ գարնանային քննաշրջանը նախապատրաստվել է պատշաճ մակարդակով: Նախապես ուսանողներին ներկայացվել է քննաշրջանի ժամանակացույցը, բոլոր կուրսերում մանրամասնվել է քննությունների և ստուգարքների կազմակերպման կարգը, լուսաբանվել է գիտելիքների գնահատման կարգը: Ուսանողների ակտիվությունը խթանելու նպատակով, դասախոսներից նախապես պահանջվել է կիսամյակի ընթացքում ակտիվ և պատրաստակամ ուսանողներին ստուգարքներ նշանակել առանց լրացուցիչ հարցումների, ինչը դրական դեր կունենա շատ ուսանողների համար:
Գարնանային քննաշրջանը կտևի սթ. մայիսի 26-ից մինչև հունիսի 21-ը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Սարհատյանը, Ա. Մարդանյանը, Ա. Հովակիմյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գարնանային քննաշրջանի ժամանակացույցը:

Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ զեկուցողը նշեց, որ ընթացիկ քննությունները անցկացվեցին սահմանված ժամանակացույցով: Քննությունների հարցերը կազմված էին թեստային առաջադրանքների ձևով: Պետք է արձանագրել, որ արդյունքները միջինից բարձր էին: Դա կարելի է բացատրել մի քանի հանգամանքով. նախ՝ ուսանողների մեծ մասը սկսել է լուրջ ուշադրություն հատկացնել ընթացիկ քննությունների նախապատրաստմանը, երկրորդ՝ դասախոսների մի մասը /ոչ մեծ/ դեռևս չի տիրապետում պրոֆեսիոնալ մակարդակով թեստային առաջադրանքներ կազմելու հմտություններին և երբեմն դրանք կազմված են լինում չափից ավելի հեշտ, երրորդ՝ ընթացիկ քննությունների թեստերը կազմված են լինում վեց շաբաթվա

ծրագրային նյութի հիման վրա, ինչից ենթադրվում է, որ ուսանողը սովորելու մեծ ծավալի նյութ չունի, չորրորդ՝ թեստային առաջադրանքների պայմաններում շարունակում է գործել պատահականության գործոնը, պատահական նշումներ կատարելով ուսանողը երբեմն ստանում է բարձր միավոր: Զեկուցողն ասաց, որ երկրորդ ընթացիկ քննություններից հետո ֆակուլտետում արձանագրվել է հետևյալ պատկերը.

Պատմություն մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.90 և 7.06,

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 1.42 և 5.30,

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.48 և 7.64,

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.26 և 6.31,

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.31 և 6.31:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ. գ. թ., դոցենտ Վ. Ավագյանը, Մ.գ.թ., դոց. Վ. Բրուտյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Վ. Ալեքսանյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Ս. Խաչատրյան